

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա. Ի. ԱԼԻՍԱՆՅԱՆԻ անվան ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

05.09.2011թ.

N135/Կ

Ի լրումն ԱԱԳԼ-ի գիտական կադրերի ատեստավորման գործընթացը սկսելու մասին 08.07.2011թ. N95/Կ հրամանի, հիմք ընդունելով գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման գործող կարգը և գնահատման չափանիշները, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային գիտական կենտրոնների փորձը գիտական կադրերի ատեստավորման գործում,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ԱԱԳԼ-ի ատեստավորող հանձնաժողովի կողմից մշակված, ընդունված և ԱԱԳԼ-ի տնօրինությանը առաջարկված գիտական աշխատողների որակավորման գնահատման հետևյալ քանակական ցուցանիշները.

- հրատարակված աշխատանքների h-ցուցանիշը (h-index), որը հաշվի է առնում հղումների քանակը, ըստ հետևյալ աղյուսակի (առավելագույնը 5 միավոր).

<i>h-ցուցանիշը</i>	<i>շնորհվող միավորը</i>
<i>0 – 3</i>	<i>1</i>
<i>4 – 6</i>	<i>2</i>
<i>7 – 9</i>	<i>3</i>
<i>10 – 12</i>	<i>4</i>
<i>>12</i>	<i>5</i>

- Բարձր վարկանիշ (impact factor >0.5) ունեցող ամսագրերում վերջին 5 տարվա ընթացքում տպագրված հոդվածների քանակի համար շնորհվող միավորներ՝ ըստ հետևյալ աղյուսակի (առավելագույնը 5 միավոր).

<i>Հոդվածների քանակը</i>	<i>շնորհվող միավորը</i>
<i>0 – 1</i>	<i>1</i>
<i>2 – 4</i>	<i>2</i>
<i>5 – 7</i>	<i>3</i>
<i>8 – 10</i>	<i>4</i>
<i>>10</i>	<i>5</i>

- Ասպիրանտների, ատենախոսների և գիտնականների խմբի ղեկավարման համար, շնորհվող միավորներ՝ ըստ հետևյալ աղյուսակի (առավելագույնը 5 միավոր)։

Ասպիրանտի կամ ատենախոսի ղեկավարում	1 միավոր յուրաքանչյուր անձի համար
Գիտական խմբի ղեկավարման համար	2 միավոր

2. ԱԱԳԼ-ի գիտական կադրերի ատեստավորումը *անցկացնել* վերը նշված ցուցանիշների ընդհանուր գումարի համաձայն՝ ըստ ստորեւ բերված աղյուսակի (առավելագույնը 15 միավոր)

<i>Շնորհվող գիտական պաշտոնը</i>	<i>Միավորների ընդհանուր գումարը</i>
Գիտական աշխատող	մինչեւ 8 միավոր
Ավագ գիտական աշխատող	8-ից 12 միավոր
Առաջատար գիտական աշխատող	12 միավորից բարձր

3. Սույն հրամանը ուժի մեջ է ստորագրման պահից:

ԱԱԳԼ-ի տնօրեն



Ա.Չիլինգարյան

Կատ. Միքայելյան



05.09.2011թ.